

Սեդա Ա. Պարսամյան

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ*

Բանալի բառեր - մշակութային ցեղասպանություն, վանդալիզմ, էթնոցիդ, էթնիկ ծուլում, էթնիկ զտում, ցեղասպանություն, Ռաֆայել Լեմկին, Հայոց ցեղասպանություն, ցեղասպանագիտություն, միջազգային իրավունք:

Մուտք

«Մշակութային ցեղասպանություն» (Cultural Genocide) եզրույթը սահմանվել է Ռաֆայել Լեմկինի կողմից «ցեղասպանություն» բառերի սահմանման հետ միաժամանակ և, իր նախնական բնորոշմամբ, խմբի համակարգված ու դիտավորյալ ոչնչացման՝ ցեղասպանություն հանցագործության բաղկացուցիչ մաս է կազմել:

Սակայն տարիներ շարունակ տարբեր ցեղասպանագետների կողմից եզրույթը ենթարկվել է փոփոխությունների՝ հեռանալով իր սկզբնական բնորոշումից: «Մշակութային ցեղասպանություն» եզրույթի շուրջ տեսաբանների անհատական մոտեցումներն ու տարածայնությունները մեծապես պայմանավորված են միջազգային իրավունքի տեսանկյունից դրա հստակ սահմանման բացակայությամբ:

Սույն հոդվածում մի կողմից ներկայացվում են «մշակութային ցեղասպանություն» եզրույթի սկզբնավորման ակունքները՝ միևնույն հանցագործության՝ ցեղասպանության երկու տարբեր կողմերի՝ ֆիզիկական բնաջնջման և մշակութային ոչնչացման շաղկապվածության շեշտադրմամբ, մյուս կողմից քննարկվում են ցեղասպանագիտության տեսաբանների՝ «մշակութային ցեղասպանություն» եզրույթի վերաբերյալ առ այսօր գոյություն ունեցող մոտեցումները, մասնավորապես՝ այն խմբագրելու փորձերը՝ մինչև անգամ անվանափոխման միջոցով:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.11.2019:

1. «Մշակութային ցեղասպանություն» եզրույթի ծագումն ու բնորոշումը. Ռաֆայել Լեմկին

«Մշակութային ցեղասպանություն» եզրույթի ձևավորման հիմքում ընկած է «վանդալիզմ» (vandalism) բառեզրը: Նախքան «genocide» եզրույթի առաջադրումն ու բնորոշումը՝ դեռևս 1933 թ. Մադրիդի գիտաժողովում, Ռաֆայել Լեմկինը¹ հանդես եկավ օրենսդրական մի քանի այլ նախագծերով, մասնավորապես՝ բարբարոսության (barbarity) և վանդալիզմի (vandalism) դատապարտման համար²: «Բարբարոսություն» եզրույթը սահմանելով որպես «ազգային, կրոնական, ռասայական և սոցիալական ընդհանրության կանխամտածված ոչնչացում», իսկ «վանդալիզմ»-ը՝ «...ընդհանրությունների ուրույն հանճարի դրսևորում հանդիսացող մշակույթի և արվեստի գործերի ոչնչացում»³, Լեմկինը պնդում էր, որ երկուսն էլ պետք է որակել որպես միջազգային հանցագործություններ: Մասնավորապես վանդալիզմի ակտը, ըստ Լեմկինի, շատ ավելի ծանր հետևանքներ կարող էր ունենալ, քանի որ այս կամ այն արվեստի գործի (որի ստեղծմանը նպաստել է եզակի հանճարը) ոչնչացումն անդառնալի կորուստ է ոչ միայն կոնկրետ խմբի մշակույթի համար, այլև ուղղված է ողջ մարդկության ու համաշխարհային մշակույթի դեմ⁴: Նրա դիտարկմամբ՝ հարձակումը մշակույթի վրա միևնույն ժամանակ հարձակում է խմբի հոգևոր ու բարոյական արժեքների, ինչպես նաև ազգային հատկանիշների վրա, առանց որոնց՝ խումբը երկար գոյատևել չի կարող:

Այսպիսով՝ վանդալիզմը, Լեմկինի բնորոշմամբ, ակնհայտորեն հենց մշակութային ցեղասպանության հիմքն է: Այն Լեմկինի համար ի սկզբանե կենսական կարևորություն ունեցող դրույթ էր և տարիներ հետո դրվելու էր ցեղասպանության հայեցակարգի հիմքում: Դեռևս 1933 թ. Լեմկինի սահմանած երկու հանցագործություններն էլ՝ բարբարոսությունն ու վանդալիզմը, շուրջ մեկ տասնամյակ անց մեկտեղվեցին ցեղասպանության ընդհանուր սահմանման մեջ՝ դառնալով այս հանցագործության բնորոշման կարևոր բաղադրիչներ: Ավելին՝ երկու հանցագործություններն էլ՝ թե՛ բարբարոսությունը և թե՛ վանդալիզմը, մեծապես պայմանավորված էին Հայոց ցեղասպանությամբ, որի մասին առավել մանրամասն կխոսենք ստորև:

1 Ռաֆայել Լեմկին (1900-1959)՝ հրեական ծագումով լեհ իրավագետ, «ցեղասպանություն» եզրույթի հեղինակ: Մեծ ներդրում է ունեցել «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի մշակման և ընդունման գործում: Հեղինակ է մի շարք աշխատությունների:

2 Տե՛ս **Lemkin R.**, Acts Constituting a General (Transnational) Danger Considered as Offences against the Law of Nations, 1933 / <http://www.preventgenocide.org/lemkin/madrid1933-english.htm> (մուտք՝ 11.02.2019), տե՛ս նաև՝ Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin, edited by **Frieze D.-L.**, New Haven: Yale University Press, 2013, էջ 22:

3 Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin, p. 22:

4 Տե՛ս նույն տեղում:

1944 թ. իր «Առանցքի երկրների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» հիմնարար աշխատության մեջ Ռ. Լեմկինը, առաջին անգամ շրջանառության մեջ դնելով «genocide» (գենոցիդ, ցեղասպանություն) եզրույթը, վերջինիս բնորոշման մեջ առանձնահատուկ տեղ հատկացրեց նաև մշակութային արժեքների ոչնչացման խնդրին⁵: Ըստ Լեմկինի՝ ցեղասպանությունը տարբեր գործողություններից կազմված համակարգված ծրագիր է, որը նպատակ ունի կազմաքանդելու ազգային խմբերի կենսական կարևորության կառույցները՝ խմբի ոչնչացման դիտավորությամբ: Այդ ծրագրի նպատակներն են ազգային խմբերի քաղաքական ու սոցիալական ինստիտուտների, մշակութային, լեզվական ու ազգային զգացումների, կրոնի ու տնտեսության կազմալուծումը և խմբի անդամների անձնական անվտանգության, ազատության, առողջության, արժանապատվության և անգամ կյանքի ոչնչացումը⁶: Լեմկինը նկարագրում է ցեղասպանության ութ բաղադրիչները կամ գործիքակազմը (technique)՝ քաղաքական, սոցիալական, մշակութային, տնտեսական, կենսաբանական, ֆիզիկական, կրոնական և բարոյական⁷: Մասնավորապես, մշակութային ցեղասպանության մեջ նա ներառում է խմբի ազգային ավանդույթների ու լեզվի արգելքը, մշակութային արժեքների՝ հուշարձանների, արխիվների ու գրադարանների ոչնչացումը, ինչպես նաև խմբի մշակույթն ու արվեստը ներկայացնող մարդկանց բնաջնջումը⁸:

Մշակութային ցեղասպանության կամ խմբի մշակույթի ոչնչացման գաղափարի ծնունդը և այն ցեղասպանության հայեցակարգում ներառելու կարևորությունն առավել մանրամասն լուսաբանված են Ռ. Լեմկինի հուշերում ու արխիվային գրագրություններում⁹: Մելբուռնի Դիքինի համալսարանի դասախոս, դոկտոր Դոննա-Լի Ֆրիզը, ուսումնասիրելով Լեմկինի արխիվային փաստաթղթերը, նշում է, որ վերջինիս կողմից մշակույթի ոչնչացմանը հատկացված ուշադրությունը մեծապես պայմանավորված է եղել Հայոց ցեղասպանության օրինակով՝ որպես շարունակական և պատմականորեն բյուրեղացած ցեղասպանություն, և մշակույթի ոչնչացման գաղափարը երբևէ դուրս չի մնացել ցեղասպանության վերաբերյալ Լեմկինի ունեցած հայեցակարգային ընկալումներից¹⁰:

5 Տե՛ս Lemkin R., Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress, Washington: Carnegie Endowment for International Peace, 1944, էջ 79-80:

6 Տե՛ս նույն տեղում:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 82-90:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 84-85:

9 Տե՛ս Totally Unofficial..., Raphael Lemkin Collection, American Jewish Historical Society (AJHS/ http://digital.cjh.org/R/3N5MGJHA7A23T3DB59T73H5SIEIFT31IDD44FA4EQ8UGA75GEM0882?func=collection-result&collection_id=1661&pds_handle=GUEST (մուտք՝ 12.02.2019)), ինչպես նաև Frieze D.-L., “Genos-the Human Group”: How the Concept of “Culture” Underscores Raphael Lemkin’s Notion of “Genocide,” The Crime of Genocide: Prevention, Condemnation and Elimination of Consequences, Proceedings of International Conference (Yerevan, December 14-15, 2010, MFA of Armenia, AGMI), Yer., 2011, էջ 164-171:

10 Տե՛ս Frieze D.-L., նշվ. աշխ., էջ 165:

Միևնույն համոզմունքն է արտահայտում ամերիկահայ գրող, հետազոտող Փիթեր Բալաքյանը, որն իր «Ռաֆայել Լեմկին, մշակութային ոչնչացում և Հայոց ցեղասպանությունը» ընդարձակ հոդվածում պնդում է, որ հենց 1890-ականների հայերի զանգվածային կոտորածները, Հայոց ցեղասպանությունն ու դրանց անպատժելիությունն են հեղափոխել դեռևս պատանի Լեմկինի աշխարհընկալումը՝ հետագայում դառնալով ցեղասպանության հայեցակարգի, այդ թվում և՛ նրա մշակութային բաղադրիչի ձևավորման ու զարգացման կարևոր շարժառիթ¹¹: Մահվանից ամիսներ առաջ Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրատարակած մի հոդվածում Լեմկինն ընդգծում է, որ Թուրքիայում ցեղասպանության ժամանակ հայ ժողովրդի կրած մշակութային կորուստներն առավել ցնցող են եղել¹²: Լեմկինի բնորոշմամբ՝ «որպես Թուրքիայի մտավորականության կորիզ»՝ հայերն ունեցել են անձնական արժեքավոր գրադարաններ, արխիվներ ու պատմական ձեռագրեր, որոնք ցիրուցան են եղել և անհետացել, ոչնչացվել են եկեղեցիներ, վանքեր ու պատմաճարտարապետական արժեք ունեցող հուշարձաններ¹³:

Իր ձեռագրերից մեկում լուսաբանելով ցեղասպանության հայեցակարգում ներառված մշակույթի կարևորությունը՝ Լեմկինը նշում է, որ մարդկային խմբի գաղափարը պարփակված է «գենոս» եզրույթում, որն իր հերթին մշակույթի և քաղաքակրթության հիմքն է, իսկ իրական մշակույթ ստեղծողը մարդկային հանրությունն է¹⁴: Նրա բնորոշմամբ՝ մշակութային բազմազանությունն է քաղաքակրթություն ձևավորում, և հետևաբար ծայրահեղ ազգայնականությունն իր գաղափարական հիմքով հանգեցնում է մշակութային բազմազանության ժխտմանն ու քաղաքակրթության հանդեպ «բռնի միջամտությանը»¹⁵: Եվ իսկապես, ազգային, կրոնական կամ էթնիկ յուրաքանչյուր խումբ խարսխված է իր մշակույթի վրա, իսկ ոճրագործները գիտակցում են, որ խմբին չեզոքացնելու և խոցելու արդյունավետ եղանակը վերջինիս անդամներին միավորող, շաղկապող, ինչպես նաև իմաստ հաղորդող թելերի՝ լեզվի, ազգային ու կրոնական ավանդույթների, հոգևոր և նյութական մշակույթի արժեքների ոչնչացումն է: Հետևաբար խմբին բնաջնջելու փորձն առաջին հերթին ուղղված է վերջինիս բնորոշ հատկանիշների և որակների (Լեմկինի առաջարկած եզրույթով՝ գենոսի) ոչնչացմանը: Ահա թե ինչու «ցեղասպանություն» հաս-

11 Տե՛ս **Balakian P.**, Raphael Lemkin, Cultural Destruction, and the Armenian Genocide, “Holocaust and Genocide Studies”, vol. 27, Issue 1, 1 April 2013, էջ 58-61: Սակածի առնչությամբ դեռևս երիտասարդ դոկտորանտ Լեմկինի հուշերում կարողում ենք. «Թուրքիայում ավելի քան 1.2 միլիոն հայ սպանվեց միայն այն պատճառով, որ քրիստոնյա էր: ... Հետո՝ մի օր, թերթում կարդացի, որ բոլոր թուրք պատերազմական հանցագործները պետք է ազատ արձակվեն: Ես ցնցված էի: Ազգը ոչնչացված է, իսկ մեղավորներն ազատության մեջ են»: Այնուհետև Լեմկինի մտորումները հանգում են նրան, թե ինչու է մարդը պատիժ կրում, երբ սպանում է որևէ մեկին. մի՞թե միլիոնավոր մարդկանց սպանությունը պակաս հանցագործություն է: Նա գրում է, որ թեև չցիտի բոլոր պատասխանները, բայց գգում է, որ «աշխարհը պետք է օրենք ընդունի ռասայական կամ կրոնական նմանատիպ սպանության դեմ» (տե՛ս Totally Unofficial..., էջ 19-20):

12 Տե՛ս **Lemkin R.**, Father of Genocide Convention, Reviews Work Relating to Turkish Massacres, Hairenik Weekly: Thursday January 1, 1959 / <http://asbarez.com/59792/lemkins-hairenik-weekly-article-50-years-later-a-powerful-reminder/> (մուտք՝ 02.12.2019):

13 Տե՛ս նույն տեղում:

14 Տե՛ս **Frieze D.-L.**, նշվ. աշխ., էջ 169-170:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 170:

կացության առաջին տեսաբանը՝ Ռաֆայել Լեմկինը, բնութագրելով մարդկության դեմ ուղղված այս ծանրագույն հանցագործությունը, նրանում կարևոր տեղ հատկացրեց մշակութային կողմին և, ինչպես հաջորդող էջերում կտեսնենք, հետևողականորեն պայքարեց, որպեսզի մշակութայինը ցեղասպանությունից չօտարվի և չօտարանջատվի:

Իր անթվակիր արխիվային գրագրություններից մեկում Լեմկինը, զարգացնելով ցեղասպանագիտության մշակութային ուղղությունը, չափազանց կարևորում է ֆիզիկական, կենսաբանական և մշակութային ցեղասպանությունների միմյանցով սերտորեն փոխկապակցված լինելը¹⁶: Նա առանձնացնում է մարդկային խմբի համար կենսական կարևորություն ունեցող 3 շերտ՝ ֆիզիկական գոյություն, կենսաբանական շարունակականություն (վերարտադրության միջոցով) և հոգևոր ու մշակութային ինքնադրսևորում: Համապատասխանաբար այս երեք կենսաշերտերի վրա հարձակումը, ըստ Լեմկինի, կարող է որակվել որպես ֆիզիկական, կենսաբանական կամ մշակութային ցեղասպանություն¹⁷: Լեմկինի դիտարկմամբ՝ մշակութային ցեղասպանությունը կարող է իրագործվել հիմնականում կրոնական և մշակութային դաշտերում՝ ոչնչացնելով այն ինստիտուտներն ու օբյեկտները, որոնց միջոցով կազմակերպվում է խմբի հոգևոր կյանքը, ինչպես, օրինակ, հոգևոր առաջնորդներին, երկրպագության վայրերը, կրոնական ու պաշտամունքային կառույցները, դպրոցները, արվեստի ու մշակույթի հարստությունները: Ի վերջո, հոգևոր միասնության ուժը թուլանում է, և խումբը սկսում է անկում ապրել¹⁸:

Սակայն, ըստ Լեմկինի, մշակութային արժեքների ոչնչացման ոչ բոլոր դեպքերը կարող են կամ պետք է որակվեն որպես ցեղասպանություն: Ցեղասպանական գործողություն են համարվում մշակույթի ոչնչացման այն դեպքերը, որոնք թիրախային խմբի դիտավորյալ բնաջնջման նպատակ են հետապնդում: Դատարբերակելու համար Լեմկինն առաջարկում է նախ և առաջ ուսումնասիրել և տարբերակել «մշակութային ոչնչացում» և «մշակութային ծուլում» հասկացությունները: Ըստ Լեմկինի հայեցակարգի՝ մշակութային ծուլումը կամ միավորումը, որը ցեղասպանական բնույթ չի կրում, տեղի է ունենում աստիճանաբար, չկանխորոշված կերպով և «մշակույթի շարունակական և դանդաղ ադապտացիա»¹⁹ է՝ պայմանավորված ներքին ու արտաքին զանազան ազդեցություններով: Մինչդեռ մշակութային ցեղասպանությունն իր տեսակի մեջ ուրույն է, քանի որ այն ոչ

16 Stü Raphael Lemkin Collection, box 6, folder 2, “Genocide as a crime under international law”, p. 2, American Jewish Historical Society (AJHS/http://digital.cjh.org/R/L97JR1HAXIUIYKULF24PFYHGBG8FCUKAEBJ465QLU3FTJJDVGINS-03877?func=results-jump-page&set_entry=000021&result_format=002 (մուտք՝ 12. 02. 2019)):
 17 Տե՛ս նույն տեղում:
 18 Տե՛ս նույն տեղում:
 19 Մեջբերումը ըստ Frieze D.-L., նշվ. աշխ., էջ 167:

միայն ոչնչացման բուն գործողությունն է, որն իրագործվում է բռնությամբ, կտրուկ և ամբողջությամբ, այլև դրսևորվում է խմբի ֆիզիկական կամ կենսաբանական բնաջնջման գործողություններում: Հետևաբար, Լեմկինի պնդմամբ, մշակութային ցեղասպանության և մշակութային ծուլման տարբերակումը որևէ դժվարություն չի ներկայացնում, քանի որ մշակութային ցեղասպանությունը ներառված է ցեղասպանությունն իրագործողի նպատակի, դիտավորության ու ծրագրի մեջ²⁰: Իր հիմնարար աշխատության մեջ որպես մշակութային ցեղասպանության վառ օրինակ Լեմկինը ներկայացնում է 1939 թ. գերմանացիների կողմից Լյուբլինի (քաղաք Լեհաստանում) հրեական աստվածաբանական ճեմարանի գրադարանի հրկիզման դրվագը՝ մեջբերում անելով դրան մասնակցած մի գերմանացու խոստովանությունից. «Մեզ համար Լեհաստանում իր մեծությամբ հայտնի Թալմուդի ակադեմիայի²¹ ոչնչացումն առանձնակի հպարտության առարկա էր: Մենք դուրս նետեցինք Թալմուդի հսկայական գրադարանը և տեղափոխեցինք շուկա, որտեղ և հրկիզեցինք այն»²²: Իր խոստովանության մեջ գերմանացին պատմել է նաև, թե ինչպես էր քսան ժամ շարունակվող հրդեհի շուրջ հավաքված հրեաների ողբը խլացրել իրենց, և ինչպես իրենք զինվորական նվազախմբի ուղեկցությամբ, ուրախ գոռում-գոչյուններով լռեցրին հրեաներին²³: Հոլոքոստի այս մեկ դրվագով Լեմկինը մատնանշում է միևնույն հանցագործության երկու կողմերը՝ մշակութային և ֆիզիկական ոչնչացումը՝ միևնույն ժամանակ ընդգծելով ոճրագործի՝ իր գործած հանցանքի գիտակցումը, այն է՝ դիտավորությունը²⁴:

Լեմկինի կողմից մշակութային ցեղասպանությանը չափազանց մեծ տեղ հատկացնելու մասին են վկայում վերջինիս քրեականացմանն ուղղված նրա ջանքերը: Ցեղասպանության վերոնշյալ ութ բաղադրիչներից «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի երկու նախագծերում ընդգրկվեցին միայն երեքը՝ ֆիզիկականը (ֆիզիկական անձանց ոչնչացում), կենսաբանականը (ծնունդների կանխարգելում) և մշակութայինը (խմբի առանձնահատկությունների դիտավորյալ ոչնչացում)²⁵: Սա-

20 Տե՛ս նույն տեղում, էջ 168:

21 Հուդայական Սուրբ գիրքն ու նրա մեկնություններն ուսումնասիրող և դասավանդող բարձրագույն հաստատություն:

22 **Lemkin R.**, Axis Rule in Occupied Europe, pp. 84-85.

23 Տե՛ս նույն տեղում:

24 Մշակութային ցեղասպանությունը բնորոշող նմանատիպ բազմաթիվ օրինակներով են ուղեկցվել ինչպես համիդյան շրջանի (1894-1896 թթ.) ու Կիլիկիայի հայության (1909 թ.) կոտորածները, այնպես էլ Հայոց ցեղասպանությունը: Այս մասին մանրամասն տես հեղինակի հետևյալ հոդվածներում **Պարսմյան Ս.**, Մշակութային ցեղասպանության իրագործման մեխանիզմներն 1909 թ. Ադանայի ու հարակից շրջանների կոտորածների ընթացքում և դրանց հետևանքները, «Ցեղասպանագիտական հանդես», Եր., 2013, N 1 (1), էջ 98-104, **Պարսմյան Ս.**, Հայկական մշակութային արժեքների ոչնչացման քաղաքականությունն ու դրա հետևանքները 1894-1896 թթ. համիդյան կոտորածների տարիներին, «Ցեղասպանագիտական հանդես», Եր., 2014, N 2 (1), էջ 18-30, **Պարսմյան Ս.**, Հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման երիտթուրքական քաղաքականությունը (1915-1918 թթ.), «Ցեղասպանագիտական հանդես», Եր., 2018, N 6 (1), էջ 71-104:

25 Տե՛ս **Secretariat Draft**: First Draft of the Genocide Convention, Prepared by the UN Secretariat, [May] 1947 [UN Doc. E/447], **Ad Hoc Committee Draft**: Second Draft Genocide Convention Prepared by the Ad Hoc Committee of the Economic

կայն, չնայած խնդրի կարևորությանը, հենց մշակութային ասպեկտի ներառման հարցը դարձավ վեճերի ու հակադրությունների պատճառ²⁶: Որքան էլ մշակութային ցեղասպանությունն առանցքային տեղ էր զբաղեցնում Լեմկինի հայեցակարգում, և նրա կողմից խիստ կարևորվում էր կոնվենցիայում այդ եզրույթի ներառումը, այնուամենայնիվ, նա ստիպված էր ընկրկել այդ ծանր պայքարում, որպեսզի ցեղասպանության հայեցակարգն իրավական ուժ ստանար: Կոնվենցիայի ընդունումից հետո էլ տասնամյակներ շարունակ խնդրահարույց է եղել միջազգային իրավական փաստաթղթերում «genocide» եզրույթի սահմանման ընդլայնման և դրանում մշակութային ասպեկտի կիրառման հարցը: Մինչդեռ ցեղասպանություն իրագործելիս ոճրագործների խնդիրը միայն խմբի անդամների սպանությունը չէ, այլև այդ խմբի ինքնության ոչնչացումը, նաև՝ մշակութային ժառանգությունը վերացնելու միջոցով: Այս մասին էր պնդում Լեմկինը Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոստի օրինակով:

2. Մշակութային ցեղասպանությունն ըստ ցեղասպանագիտության տեսաբանների

Ռաֆայել Լեմկինի՝ մշակութային ցեղասպանության դրույթը հետագայում իրենց տեսություններում զարգացրին ցեղասպանագիտության դասական տեսաբաններ Լեո Կուպերը, Վահագն Դադրյանը, Սեմյուել Թոթթենը, Իսրայել Չառնին, Էլիսն Փալմերը և Մարտին Շոուն, տարբեր գիտակարգերով ցեղասպանությունն ուսումնասիրող մասնագետներ Մոհամմեդ Աբեդը, Բարի Սաութմանը, Դոնա-Լի Ֆրիզը, Դիրք Մոզեսը, Թաներ Աքչամը, Էլիզա Նովիկը, Հելեն Ֆայնը, Պամելա դե Կոնդապան և այլք: Ցեղասպանությունն ուսումնասիրողների այս կազմում կարելի է հստակ առանձնացնել երկու խումբ: Առաջին և մեծամասնություն կազմող խումբը (Լեո Կուպեր, Վահագն Դադրյան, Սեմյուել Թոթթեն, Մարտին Շոու, Մոհամմեդ Աբեդ, Բարի Սաութման, Թաներ Աքչամ, Դոնա-Լի Ֆրիզ, Պամելա դե Կոնդապան և այլք), ինչպես Լեմկինը, պնդում է, որ ցեղասպանության մշակութային կողմը ցանկացած ցեղասպանական գործողության պարտադիր դրսևորումներից մեկն է, և ցեղասպանությունն անպայմանորեն չի նշանակում խմբի ֆիզիկական ոչնչացում: Մինչդեռ ուսումնասիրողների երկրորդ խումբը (Էլիսն Փալմեր, Դիրք Մոզես, վառ ներկայացուցիչը՝ Իսրայել Չառնին) հակված է պնդելու, որ խմբի մշակույթի ոչնչացումը չպետք է ներառել

and Social Council (ECOSOC), meeting between April 5, 1948 and May 10, 1948 [UN Doc. E/AC.25/SR.1 to 28] / <http://www.preventgenocide.org/law/convention/drafts/> (մուտք՝ 15.02.2019):
 26 Այս մասին մանրամասն տես Պարսամյան Ա., Մշակութային ցեղասպանությունը միջազգային իրավունքի համատեքստում. տեսական հիմնադրույթներ, «Ցեղասպանագիտական հանդես», Եր., 2014, N 2 (2), էջ 164-175:

«ցեղասպանություն» հասկացության մեջ, որի համար պետք է թողնել միայն խմբի ֆիզիկական ոչնչացումը:

Ցեղասպանագիտության տեսաբաններից բրիտանացի սոցիոլոգ, պրոֆեսոր Մարտին Շոուի պնդմամբ՝ այն ենթադրությունը, թե մշակութային ցեղասպանությունը տարբերվում է ֆիզիկական բռնություն ենթադրող ցեղասպանությունից, իրականում թյուրիմացություն է, քանզի ցեղասպանության մշակութային ուղղությունը ցանկացած ցեղասպանական գործողության մաս է կազմում²⁷: Նա առանձնացնում է հետևյալ 3 հարթությունները. 1) մշակութային բռնաճնշում, որը խմբի մշակույթի մերժումն է նախացեղասպանական փուլում (ինչը ենթադրում է զգոնություն սպասվելիք ցեղասպանության նկատմամբ - Ս. Պ.), 2) ցեղասպանության մշակութային ուղղվածություն, որը ցեղասպանական գործընթացի մաս է կազմում, 3) խմբի ոչ միտումնավոր ոչնչացում, երբ խմբերը ոչնչանում են հիվանդություններից կամ սովից, որոնք դիտավորության արդյունք չեն²⁸: Վերջինիս դեպքում, անշուշտ, խմբի ներսում մշակութային կապերի թուլացման հետևանքով տեղի է ունենում նաև մշակույթի ոչ միտումնավոր ոչնչացում, որը ցեղասպանական ակտ չէ, հետևաբար այս դեպքում ոչնչացումը մշակութային ցեղասպանություն չի կարող դիտարկվել:

Ցանկացած խմբի գոյությունը կարող է հարցականի տակ դրվել, եթե այն զրկվում է իր մշակույթից, անգամ խմբի ֆիզիկական գոյության դեմ որևէ սպառնալիքի բացակայության պարագայում: Հետևաբար, գրում է անգլիացի հետազոտող Պամելա դե Կոնդապան, նյութական մշակույթի համակարգված և դիտավորյալ ոչնչացումը գալիս է վկայելու, որ տվյալ էթնիկ խումբը նման մշակութային գտման մաս է կազմում²⁹:

Ամերիկացի սոցիոլոգ, ցեղասպանագիտության դասական տեսաբաններից Լեո Կուպերի համոզմամբ՝ «մշակութային ցեղասպանություն» հասկացությունը պետք է վերապահված լինի այն հետևողական քաղաքականությանը, որն ուղղված է դիտավորյալ կերպով այս կամ այն խմբի մշակույթը վերացնելուն³⁰: Այն, ինչը Լեմկինն անվանում է «մշակութային ծուլում», Կուպերն անվանում է «մշակույթի փոփոխություն»: Վերջինիս պնդմամբ՝ մշակույթները կամ մշակութային ինստիտուտները, գաղութացման, էկոլոգիական փոփոխությունների և այլ ազդեցությունների հետևանքով փոխառելով մշակութային այլ տարրեր, հաճախ ենթարկվում են ձևափոխման, և նման օրինակները չպետք է բնորոշել որպես մշակութային ցեղասպանություն³¹:

27 Տե՛ս Shaw M., What is Genocide?, London, Polity Press, 2007, էջ 66:

28 Տե՛ս նույն տեղում, էջ 67:

29 Տե՛ս De Condappa P., Cultural Genocide in Bosnia-Herzegovina: Destroying Heritage, Destroying Identity/ <https://ru.scribd.com/document/86679906/Condappa-Cultural-Genocide-in-Bosnia-Herzegovina> (մուտք՝ 05.01.2019):

30 Տե՛ս Kuper L., Genocide: Its Political Use in the Twentieth Century, New Haven and London: Yale University Press, 1981, էջ 15:

31 Տե՛ս նույն տեղում:

Դոննա-Լի Ֆրիզը, հիմք ընդունելով Լեմկինի վերոնշյալ տեսությունը, առաջ է քաշում «ցեղասպան մշակութային ոչնչացում» ձևակերպումը՝ հավելելով, որ սխալ է մշակութային արժեքների ոչնչացման առանձին դեպքերը ցեղասպանական համարել³²: Ըստ նրա, օրինակ, 1989 թ. դեկտեմբերյան հեղափոխության ժամանակ Բուխարեստի համալսարանի գրադարանի կործանման պատճառ դարձած կրակը ցեղասպան չէր, քանի որ այն թիրախային խմբի դիտավորյալ ոչնչացման նպատակ չէր հետապնդում: Ուստի դժվար չի լինի տարբերակել կամ հասկանալ, թե մշակութային ոչնչացման այս կամ այն դեպքը ունի՞ արդյոք ցեղասպան դիտավորություն, այն պե՞տք է դիտարկել որպես նախազգուշացում հետագայում սպասվելիք ֆիզիկական կամ կենսաբանական ոչնչացման համար, թե՞ ոչ³³:

Կալիֆոռնիայի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր Մոհամմեդ Աբեդի պնդմամբ՝ ցեղասպանության մշակութային կողմը հանգեցնում է խմբի «սոցիալական մահվան»³⁴: Մյուս կողմից՝ որոշակի տարածքից խմբի տեղահանությունը կամ աքսորը էապես կթուլացնի մշակութային կապերը, քանի որ մասնավորապես հոգևոր մշակույթի արժեքները, ամուր կապված լինելով խմբի հայրենիքի հետ, հաճախ չեն կարող վերստեղծվել, կամ դրա համար ցեղասպանությունը վերապրող Ափյուռքից առնվազն տասնամյակներ կպահանջվեն³⁵: Աբեդի ձևակերպմամբ, եթե խմբի մշակութային ժառանգությունը, որը ենթադրվում է, որ յուրաքանչյուր սերնդի անդամներ պետք է փոխանցեն իրենց հաջորդներին, ամուր կապված է որոշակի տարածքի, ապա աքսորը ևս կարող է հեռացնել անհատներին իրենց կոլեկտիվ ինքնությունից, որի շնորհիվ նրանք այն են, ինչ կան³⁶:

Ցեղասպանագետ Վահագն Դադրյանի պնդմամբ՝ մշակութային ցեղասպանությունը թիրախային խմբի կամ զոհի մշակույթի պարտադիր յուրացումն է, որն իրագործողի կողմից դիտարկվում է որպես շահավետ միջոց: Նրա ձևակերպմամբ՝ «Տիրապետող խմբի կողմից զոհը դիտվում է որպես թանկագին թիրախ՝ իր հավաքական և անհատական ունեցվածքով, որի պարտադիր յուրացումն ընկալվում է որպես շահավետ մի բան»³⁷:

Մեր օրերում «մշակութային ցեղասպանություն» եզրույթն ավելի հաճախ նույնացվում կամ փոխարինվում է «ethnocide» (էթնոցիդ, ազգասպանություն) եզրով: Ասվածի առաջին փորձերից է 1981 թ. Սան Խոսեում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունված հռչակագիրը, որտեղ էթնոցիդը կամ մշակութային ցեղասպանու-

32 Տե՛ս Frieze D.-L., նշվ. աշխ., էջ 167:

33 Տե՛ս նույն տեղում:

34 Տե՛ս Abed M., Clarifying the concept of Genocide, "Metaphilosophy", vol. 37, Nos. 3-4 (July, 2006, Special Issue: Genocide's Aftermath: Responsibility and Repair), էջ 327:

35 Տե՛ս նույն տեղում:

36 Տե՛ս նույն տեղում:

37 Dadrian V. N., A Typology of Genocide, "International Review of Modern Sociology", vol. 5, No. 2 (1975), p. 205.

յունը՝ որպես ցեղասպանությանը համարժեք երևույթ, դատապարտվում է՝ բնորոշվելով որպես միջազգային իրավունքի խախտում³⁸:

Ցեղասպանագիտության մեջ «էթնոցիդ» եզրույթի առաջին տեսական բնորոշումները տվել են տեսաբան Էլիսն Փալմերն ու անվանի ցեղասպանագետ, Երուսաղեմի «Հոլոքոստի և ցեղասպանության ուսումնասիրության ինստիտուտի» տնօրեն Իսրայել Չառնին: Սակայն, ի տարբերություն Չառնիի, մեր կարծիքով, Փալմերի տեսությունն առանձնանում է իր երկակի ընկալմամբ՝ հիմք տալով որոշակի շփոթության: Այսպես՝ մի կողմից Փալմերը գրում է, որ էթնոցիդն իր պարզագույն բնորոշմամբ ենթադրում է մշակույթի ոչնչացում և կոնցեպտուալ առումով տարբերվում է ցեղասպանությունից, որն ուղղված է խմբի ֆիզիկական ոչնչացմանը³⁹: Մյուս կողմից պնդում է, որ ցեղասպանության և էթնոցիդի տարբերակումը հստակ չէ. էթնոցիդի դեպքում թեև ֆիզիկական ոչնչացումը պարտադիր չէ, սակայն այն հաճախ տեղի է ունենում միաժամանակ: Ապա հավելում է, որ հաճախ «հաջողված» էթնոցիդը կարող է հանգեցնել նրան, որ խմբի անդամները հրաժարվեն ապրելու ցանկությունից⁴⁰: Այսինքն՝ Փալմերի առաջարկած ձևակերպումից երևում է, որ էթնոցիդը մշակույթի ոչնչացումն է, որով վտանգվում է տվյալ խմբի՝ որպես առանձին էթնիկ ինքնության գոյությունը, ինչի մասին պնդում էր և Լեմկինը՝ առանց կիրառելու տարանջատում մտցնող «էթնոցիդ» եզրույթը:

Որպես մշակութային ցեղասպանության բնորոշիչ՝ «էթնոցիդ» բառեզրի առավել հստակ սահմանումը տալիս է Իսրայել Չառնին: Վերջինիս առաջարկած տեսությունն ուղղակիորեն հակադրվում է Լեմկինի սահմանած հայեցակարգին: Ըստ Չառնիի՝ խմբի մշակույթի ոչնչացումը չպետք է ներառել «ցեղասպանություն» հասկացության մեջ, որի համար պետք է թողնել «մարդկանց կյանքին վերջ դնող իրական զանգվածային սպանությունների» բնորոշումը միայն, այսինքն՝ խմբի ֆիզիկական ոչնչացումը⁴¹: Ուստի մշակութային ցեղասպանության փոխարեն նա առաջարկում է օգտագործել ցեղասպանության մինչ այդ հայտնի սահմանման հետ կապ չունեցող «էթնոցիդ» եզրույթը՝ որպես այն հիմնական գործընթացների բնորոշիչ, որոնք խոչնդոտում կամ խաթարում են մշակույթի կամ ազգի վերարտադրության և շարունակականության բնական ցիկլը⁴²: Այսպիսով՝ էթնոցիդը, ըստ Չառնիի սահմանման, էթնիկական, ազգային, կրոնական կամ այլ խմբի մշակույթի դիտավորյալ ոչնչացումն է, և պարտադիր չէ, որ

38 Տե՛ս UNESCO and the struggle against ethnocide. Declaration of San Jose, December 1981 / [http://unesdoc.unesco.org/images/0004/000499/049951eo.pdf_\(մուտք_12.02.2019\)](http://unesdoc.unesco.org/images/0004/000499/049951eo.pdf_(մուտք_12.02.2019)):

39 Տե՛ս **Palmer A.**, “Ethnocide”, in: Dobkowski Michael N. and Wallimann Isidor, *Genocide in Our Time: An Annotated Bibliography with Analytical Introductions*, Pierian Press, Ann Arbor, Michigan, 1992, էջ 1:

40 Տե՛ս նույն տեղում:

41 Տե՛ս **Charny I. W.**, *Toward a Generic Definition of Genocide*, “Genocide: Conceptual and Historical Dimensions”, edited by **George J. Andreopoulos**, Philadelphia, University of Pennsylvania Press, 1994, էջ 84:

42 Նույն տեղում:

այն ներառի մարդուն կյանքից զրկելու հանգամանքը⁴³: Չառնին էթնոցիդն իր հերթին առանձնացնում է էթնոցիդի 5 ենթախումբ, որոնք են՝ կենսաբանական և ֆիզիկական էթնոցիդ (biological and physical ethnocide), տնտեսական էթնոցիդ (economic ethnocide), լինգվոցիդ (linguicide), կրոնական և հոգևոր (religious and spiritual ethnocide), սոցիալական էթնոցիդ (social ethnocide)⁴⁴: Մասնավորապես «լինգվոցիդը նա սահմանում է հետևյալ կերպ. «Մեկ այլ ժողովրդի լեզվի կիրառման արգելք կամ այլ եղանակով դիտավորյալ ոչնչացում»⁴⁵:

Հարվարդի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Հելեն Ֆայնի պնդմամբ՝ այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են լինգվոցիդը, սոցիոցիդը, մշակութային ցեղասպանությունը և այլն, ցեղասպանության սահմանմանը հավելվում են այն պատճառով, որ ցույց տան մարդկային հավաքականության դեմ իրագործված քաղաքականության սոցիալական հետևանքները⁴⁶:

Մշակութային ցեղասպանության կամ «էթնոցիդի» որակավորման համար Ի. Չառնին առաջարկում է հետևյալ չափորոշիչները՝ 1) կանխամտածվածություն, 2) համընդհանուր կամ միաձայն ընդունված նպատակ, 3) քաղաքականությունն իրականացնելու վճռականություն, 4) դիմադրության հաղթահարման ջանքեր, 5) զոհերի փախուստը խոչընդոտելու ջանքեր, 6) հետապնդման դաժանություն⁴⁷:

Հատկանշական է, որ էթնոցիդն առավել ակնհայտ դրսևորվել է տեղաբնիկ փոքրամասնությունների հանդեպ՝ գաղութատիրական էքսպանսիայի, ազգային պետությունների ստեղծման և պետության զարգացման ծրագրերի համատեքստում⁴⁸:

Սիդնեյի համալսարանի ժամանակակից պատմության պրոֆեսոր Դիրք Մոզե-սը, նկատի ունենալով որոշ տեսաբանների կողմից բնիկ ժողովուրդների գաղութացման գործընթացները որպես «մշակութային ցեղասպանություն» բնորոշելու միտումը, հարցադրում է անում, թե կարելի՞ է արդյոք հավասարության նշան դնել մշակութային ցեղասպանության և ֆիզիկական բնաջնջման միջև: Նա պնդում է, որ երկու երևույթների միջև, անշուշտ, գոյություն ունի փոխկապակցվածություն, սակայն պետք է խուսափել «ցեղասպանություն» եզրույթն այն դեպքերի համար օգտագործելուց, որոնցում բացակայում է խմբի բռնի ոչնչացման փորձը⁴⁹:

Հոնկոնգի գիտության և տեխնոլոգիաների համալսարանի պրոֆեսոր, քաղաքագետ և իրավաբան Բարի Սաուֆմանի պնդմամբ՝ այն դիտավորությունը, որն ըն-

43 Սոյն տեղում, էջ 85, 90, տե՛ս նաև **Charny I. W.**, Classification of Genocide in Multiple Categories, “Encyclopedia of Genocide”, vol. 1, Santa Barbara, California, 1999, էջ 9:

44 Մանրամասն տե՛ս **Charny I. W.**, Classification of Genocide in Multiple Categories, էջ 9:

45 Սոյն տեղում:

46 Տե՛ս **Fein H.**, Defining Genocide as a Sociological Concept, “The Genocide Studies Reader”, edited by Totten S. and Bartrop P. R., New York, Routledge, 2009, էջ 50:

47 Տե՛ս **Charny I. W.**, Toward a Generic Definition of Genocide, էջ 90:

48 Տե՛ս **Palmer A.**, նշվ. աշխ., էջ 1:

49 Տե՛ս **Moses A. D.**, Conceptual blockages and definitional dilemmas in the ‘racial century’: genocides of indigenous peoples and the Holocaust, “Patterns of Prejudice”, vol. 36, Issue 4, 2002, էջ 25-26:

կած է էթնոցիդի հիմքում, չի կարող համարժեք լինել մշակութային ցեղասպանության հիմքում ընկած դիտավորությանը, քանի որ էթնոցիդը չի առնչվում խմբի ֆիզիկական և կենսաբանական ոչնչացմանը, այլ հատուկ է բռնի ծուլմանը⁵⁰: Եվ քանի որ «էթնոցիդ» բառեզրը ներառված չէ ՄԱԿ-ի մարդու իրավունքների մասին փաստաթղթերում և չունի որոշակի բնորոշում, այդ պատճառով տեսաբաններն անհատական մոտեցում են ցուցաբերում այս հարցում⁵¹:

Ներկայումս որոշ հետազոտողների կողմից «մշակութային ցեղասպանություն» եզրույթի հետ հաճախ կիրառվում են «էթնիկ ծուլում» (ասիմիլյացիա) և «էթնիկ զտում» արտահայտությունները: Այս առնչությամբ մտահոգություն է հայտնում միջազգային իրավունքի մասնագետ Էլիզա Նովիկը. պե՞տք է արդյոք մշակութային ոչնչացումներին զուգընթաց տեղի ունեցած էթնիկ զտման փորձերը դիտարկել որպես մշակութային ցեղասպանություն, որը քննարկումների առարկա է և կարիք ունի հստակ ձևակերպման, մասնավորապես՝ միջազգային իրավունքի տեսանկյունից հետագա հստակեցման⁵²:

Պատմաբան Թաներ Աքչամը, հղում կատարելով Լեմկինի այն պնդմանը, որ մշակութային ցեղասպանությունը խմբի ազգային-մշակութային առանձնահատկությունների ոչնչացումն է, բռնի ուժացումը (բռնի ծուլում), այն դիտարկում է որպես մշակութային ցեղասպանությանը բնորոշ տարր⁵³: Աքչամն առանձնացնում է բռնի ուժացման չորս հիմնական բաղադրիչներ՝ 1) «կամավոր» կամ բռնի կրոնափոխությունը, 2) 12 տարեկան և ավելի փոքր տարիքի երեխաների՝ որբանոցներում և մահմեդականների տներում տեղավորելն ու թուրքիսկանական մշակույթի ոգով դաստիարակելը, 3) կանանց և հատկապես մանկամարդ աղջիկների բռնի ամուսնությունները մահմեդական տղամարդկանց հետ, 4) Հալեպում, Ռաքքայում, Ռաս-ուլ-Այնում, Դեր-Չորում վերաբնակեցված հայերին թուրքերենի ու թուրքական կրթության պարտադրանքը, հայերենին վերաբերող արգելքները և այլն⁵⁴: Պատմաբանը մտահոգություն է հայտնում, որ թեև բռնի ուժացումը ցեղասպանական գործընթացների անբաժանելի մաս է կազմում և մասնավորապես Հայոց ցեղասպանության կառուցվածքային տարրերից մեկն է, այնուամենայնիվ, խնդիրը մինչ օրս զգալիորեն անտեսվել է, և որևէ համակարգված ուսումնասիրություն չի կատարվել թեմայի վերաբերյալ: Այս բացթողումն Աքչամը պայմանավորում է երկու հանգամանքով.

50 Տե՛ս Sautman B., Cultural Genocide in International Context, “Cultural Genocide and Asian State Peripheries”, edited by Barry Sautman, New York, Palgrave Macmillan, 2006, էջ 11:

51 Տե՛ս նույն տեղում:

52 Տե՛ս Novic E., The Concept of Cultural Genocide: An International Law Perspective, Oxford University Press, 2016, էջ 45-48:

53 Տե՛ս Աքչամ Թ., Հայերի բռնի իսլամացումը. լրություն, ժխտում և ուժացում, թուրքերենից թարգմանությունը՝ Ս. Անումանի, Եր., «Տիգրան Մեծ», 2016, էջ 90:

54 Տե՛ս նույն տեղում, էջ 85-86:

1) ցեղասպանությունը քրեականացնող կոնվենցիայի սահմանումից մշակութային ցեղասպանության դրույթը դուրս թողնելով, որի բնական հետևանքը եղավ այն, որ բռնի ուժացումը մոռացության մատնվեց.

2) հետագա տարիներին ցեղասպանագիտական ուսումնասիրությունների մեծ մասը, ըստ էության, ձևավորվել է Հոլոքոստի օրինակի շուրջ, իսկ նացիստները չեն վարել հրեաներին բռնի կերպով գերմանական մշակույթը պարտադրելու, նրանց մշակութային առանձնահատկությունները ոչնչացնելու քաղաքականություն: Հրեաները հիմնականում բնաջնջվել են ֆիզիկապես, և մշակութային ոչնչացումը, տվյալ դեպքում բռնի ուժացումը, երբեք այլընտրանք չի եղել⁵⁵:

Ընդունելով Աքչամի առաջ քաշած վերոնշյալ թեզի ճշմարիտ կողմերը՝ այնուամենայնիվ, ունենք որոշակի անհամաձայնություն դրա շուրջ: Ինդիքն այն է, որ բռնի ուժացումը կամ բռնի ճուլումը բնորոշող վերոնշյալ չորս հիմնական բաղադրիչներից երկուսը (երկրորդ, մասամբ նաև երրորդ կետերը) լիովին համապատասխանում են ցեղասպանության կոնվենցիայի բնորոշման վերջին կետին, այն է՝ «գ) Խմբի երեխաների բռնի տեղափոխումն այլ խումբ»: Վերջինս, ինչպես հայտնի է, դարձավ Միավորված ազգերի կազմակերպությունում պատրաստված «Ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախագծում տեղ գտած մշակութային ցեղասպանությունը բնորոշող այն միակ ձևակերպումը, որը վերջնական տարբերակում ներառվեց ցեղասպանության բնորոշման մեջ և ստացավ իրավական ձևակերպում: Մեր առարկությունն այն է, որ Թաներ Աքչամն արդեն իսկ իրավական ձևակերպում ստացած և միջազգային իրավունքով հստակեցված բռնի տեղափոխման այս երկու տարրերը փորձում է տեղափոխել մեկ ընդհանուր դաշտ՝ դրան տալով «բռնի ուժացում» անվանումը, որն իրավական ձևակերպում չունի և միջազգային իրավունքի տեսանկյունից հստակեցման կարիք ունի:

«Մշակութային ցեղասպանություն» հասկացությունը տարբեր որակումներով սահմանվել է նաև մի շարք **հանրագիտարաններում**: Այսպես՝ «Ցեղասպանություն և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ» հանրագիտարանը «մշակութային ցեղասպանությունը» կամ «էթնոցիդ»-ը վերապահում է այն քաղաքականությանն ու գործընթացներին, որոնք «ուղղված են խմբի առանձին ինքնությունը ոչնչացնելուն խմբի անդամների ֆիզիկական ոչնչացմանը զուգընթաց կամ առանց դրա»⁵⁶: Ֆրանսիական «Քիլետ» (Quillet) հանրագիտարանային բառարանում ցեղասպանությունը որակվում է որպես հանցագործություն, որը, ֆիզիկական բնաջնջումից բացի, նպատակ ունի ոչնչացնելու նաև այս կամ այն սոցիալա-

55 Տե՛ս նույն տեղում, էջ 86-95:

56 Տե՛ս **Prott L. V.**, “Ethnocide”, Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, Dinah L. Shelton [editor in chief], vol. 1, Thomson Gale, 2005, էջ 309:

կան կամ ռասայական խմբի քաղաքական, կրոնական, սոցիալական, մշակութային և հոգևոր ինստիտուտները⁵⁷: «Սովետական մեծ հանրագիտարանը» տալիս է «ազգային-մշակութային ցեղասպանություն» որակումը, որը «դրսևորվում է այնպիսի միջոցառումներում և գործողություններում, որոնք ուղղված են որևէ խմբի (ազգաբնակչության) մայրենի լեզվի կիրառման և ազգային մշակույթի դեմ»⁵⁸: «Հայկական հարց» հանրագիտարանը տալիս է «ազգային-մշակութային եղեռն» որակումը՝ սահմանելով այն որպես «միջոցառումներ և գործողություններ որևէ ժողովրդի կամ ազգային խմբի մշակույթը ոչնչացնելու նպատակով»⁵⁹:

Ակնհայտ է, որ մշակութային արժեքների ոչնչացումը դժվար է զուգադրել մարդկանց ֆիզիկական ոչնչացման կամ մի ամբողջ խմբի բնաջնջման հետ, սակայն մասնավորապես Հայոց ցեղասպանության օրինակը գալիս է ապացուցելու, որ դրանք միևնույն հանցագործության երկու կողմերն են, որոնք փոխկապակցված են և, որպես կանոն, առանձին չեն դրսևորվում: Խմբի մշակույթի ոչնչացման անմիջական հետևանքը կարող է լինել տվյալ խմբի կենսագործունեության և հիշողության հետքերի վերացումը, ինչն էլ իր հերթին նպաստավոր պայմաններ կստեղծի ցեղասպանությունն իրագործող կողմի համար այդ խմբի երբեմնի գոյությունը ժխտելիս: Այսպես՝ մշակութային հուշարձանները, ունենալով տարածքային պատկանելություն և խորհրդանշելով կոնկրետ էթնիկ կամ դավանաբանական պատկանելություն, միաժամանակ կատարում են յուրօրինակ ցուցիչների գործառույթ տվյալ տարածքի պատկանելության հարցում առաջ բերելով մտավախություն հակառակորդ կամ մրցակցող էթնոդավանաբանական հանրության շրջանում: Որպես արդյունք՝ դա կարող է դրսևորվել չեզոքացման ծայրահեղ ձևով, այն է՝ տվյալ մշակույթի մաս կազմող հուշարձանի կամ միավորի լիակատար ոչնչացմամբ:

Հայկական մշակութային հուշարձանների դեմ իրագործված քաղաքականությունն իրավացիորեն ցեղասպանական գործողություն է բնորոշում Արկանզասի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Սեմյուել Թոթթենը⁶⁰: Մասնավորապես նա գրում է, որ թուրքերի նպատակը միայն բոլոր հայերին սպանելը չէր, այլ նաև նրանց երբեմնի գոյության վերջին հետքը մաքրելը. «Դրան հասնելու համար թուրքերը դիմում էին տարբեր մեթոդների՝ հրկիզելով և ավերելով հայկական բոլոր եկեղեցիներն ու մշակութային հուշարձանները»⁶¹:

57 Թարգմանությունն ըստ Անուշ Հովհաննիսյանի. տես **Հովհաննիսյան Ա. Ռ.**, Թուրքիա. Մշակութային ցեղասպանություն, Եր., 2005, էջ 5:

58 Генцид, «Большая советская энциклопедия», т. 6, М., 1971, с. 244.

59 «Հայկական հարց» հանրագիտարան, Եր., 1996, էջ 11:

60 Տես **Totten S.**, Genocide: A primer for Students in Grades 8-12, “Genocide: Social Science Record”, The Journal of the New York State Council for the Social Studies, Guest Editor: Totten S., vol. 24, Issue 2, New York, 1987, էջ 9-10:

61 Նույն տեղում:

Փաստորեն, տարբեր ցեղասպանությունների, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության օրինակով կարելի է պնդել, որ ոճրագործների վերջնական նպատակը թիրախավորվող խմբի տեսակի ոչնչացումն է, որը, բացի ֆիզիկական ոչնչացումից, ներառում է բազմաթիվ այլ բաղադրիչներ, այդ թվում՝ մշակութայինը: Տարանջատել կամ զատորոշել այդ բաղադրիչներից թեկուզև մեկը միևնույն հանցագործությունից և փորձել որակել այն այլ եզրույթներով կնշանակի խեղաթյուրել և մեղմացնել ցեղասպանություն հանցագործությունը: Հայոց ցեղասպանությունն ասվածի դասական օրինակն է, երբ ոճրագործները հայերի ֆիզիկական բնաջնջմանը զուգահեռ հետևողականորեն իրականացնում էին հայկական մշակույթի, լեզվի և պատմության համակարգված ոչնչացում՝ ամբողջացնելով հայի՝ որպես ազգային տեսակի բնաջնջումը: Նշված քաղաքականությունը շարունակվեց նաև թուրքական հետագա վարչակարգերի օրոք՝ լիակատար դարձնելով հայության ու նրան առնչվող ցանկացած հետքի և հիշողության մաքրումը իր պատմական տարածքներից:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ցեղասպանագիտության ոլորտում մշակութային ցեղասպանության շուրջ ծավալվել են բավական լայն քննարկումներ, և առկա են տարբեր մոտեցումներ: Չնայած հայեցակարգի հեղինակ Լեմկինի կողմից մշակութային ցեղասպանությանը տրված հստակ բնորոշմանը՝ հետագա տեսաբաններից ոմանք խմբագրեցին, մինչև անգամ անվանափոխեցին եզրույթը՝ հեռանալով նախնական բնորոշումից: Որոշ տեսաբանների կարծիքով՝ մշակութային ցեղասպանությունը սահմանելու բարդությունը պայմանավորված է իր հիմնական բաղադրիչով՝ մշակույթով, որն անընդհատ փոփոխվող և զարգացող երևույթ է⁶²: Սակայն հարցն այն է, որ այդ նույն մշակույթը զարգանում և փոփոխվում է այս կամ այն խմբի ներսում, և եթե չկա խումբը, մշակույթը չի կարող զարգանալ կամ փոփոխվել: Ակնհայտ է, որ առկա տարածայնություններն ու տեսաբանների անհատական մոտեցումները մեծապես պայմանավորված են միջազգային իրավունքի տեսանկյունից եզրույթի հստակ սահմանման բացակայությամբ: Չնայած խնդրի հրատապությանը՝ առ այսօր գոյություն չունի որևէ միջազգային իրավական գործիք կամ փաստաթուղթ, որը մշակութային ցեղասպանությունը կդարձնի պատժելի արարք: Միջազգային իրավունքում չգտնելով իր հստակ ձևակերպումը՝ «մշակութային ցեղասպանություն» եզրը լավագույն դեպքում օգտագործվում է իբրև քաղաքական քարոզչության գործիք՝ միջազգային հանրության ուշադրությունը մշակութային իրավունքների լուրջ ոտնահարումների վրա հրավիրելու և համապատասխան արձագանքն ապահովելու համար:

62 Sten Novic E., նշվ. աշխ., էջ 2:

Բազմիցս մեր հողվածներում բարձրաձայնել ենք մեր օրերում շարունակվող և ցեղասպանություններով ուղեկցվող մշակութային ոչնչացումների մասին` անդելով, որ գոյություն ունեցող անպատժելիությունը թելադրում է, որ առավել քան հրատապ է միջազգային նոր կոնվենցիայի ընդունումը, որով կքրեականացվի մշակութային արժեքների ոչնչացումը:

Սեդա Ա. Պարսամյան - զբաղվում է մշակութային ցեղասպանության, Թուրքիայում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման հիմնախնդիրների ուսումնասիրությամբ: Հեղինակ է մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածների:

Էլեկտրոնային հասցե` sparsamyan@gmail.com

Summary

CULTURAL GENOCIDE IN THE REALM OF GENOCIDE STUDIES

Seda A. Parsamyan

Key words - Cultural genocide, vandalism, ethnocide, ethnic assimilation, ethnic cleansing, genocide, Rafael Lemkin, Armenian Genocide, Genocide Studies, International Law.

The term “cultural genocide” was coined by Rafael Lemkin simultaneously with the word “genocide”, and was a constituent part of the original definition of genocide, which is “systematic and deliberate extermination of the group”. However, for many years, genocide scholars have modified the term, departing from its original definition. Some theorists are of the opinion that the difficulty in defining cultural genocide stems from its main constituent part – culture, which is permanently changing and developing. However, that same culture is being developed and changed within the group itself. Consequently, if there is no group its culture can not change and develop by itself separately. The individual approaches and disagreements of the genocide scholars about the “cultural genocide” are largely due to the lack of clarity of the term in international law. Despite the urgency of the matter, to date there is no international legal instrument or document criminalizing “cultural genocide”. Not finding its clear definition in international law, cultural genocide is being used as a policy propaganda tool to gain the attention and response of international community against the violations of cultural rights. We have raised the issue of destruction of culture being carried out nowadays and accompanied by genocides stressing that the absence of legal

regulation implies the necessity of new international convention criminalizing the destruction of culture of protected groups.

This article presents the origin and definition of the term “cultural genocide”, through emphasizing the link between physical and cultural extermination as two sides of the same crime, and discussing the approaches of genocide scholars to the term “cultural genocide”, particularly the attempts to change it also through renaming.

Резюме

КУЛЬТУРНЫЙ ГЕНОЦИД В СФЕРЕ ГЕНОЦИДОВЕДЕНИЯ

Седа А. Парсамян

Ключевые слова - культурный геноцид, вандализм, этноцид, этническая ассимиляция, этническая чистка, геноцид, Рафаэль Лемкин, Геноцид армян, геноцидоведение, международное право.

Термин «культурный геноцид» (cultural genocide) Рафаэль Лемкин создал одновременно с понятием геноцида. По первоначальной характеристике термин «культурный геноцид» обозначал составную часть преступления геноцида. Но в течение многих лет различные исследователи меняли эту концепцию, отступая от ее первоначального определения. По мнению некоторых теоретиков, сложность определения культурного геноцида проистекает из его центрального элемента - культуры, которая является постоянно меняющимся и развивающимся феноменом. Дело, однако, в том, что одна и та же культура развивается и изменяется в той или иной группе, но если нет группы, культура не может развиваться или изменяться. Индивидуальные подходы и разногласия теоретиков в отношении «культурного геноцида» во многом связаны с отсутствием ясности термина с точки зрения международного права. Несмотря на неотложность этого вопроса, на сегодняшний день не существуют международно-правовые инструменты и/или документы, которые определяли бы «культурный геноцид» как наказуемое деяние. Термин «культурный геноцид» широко не используется в международном праве, а в лучшем случае используется в качестве политического пропагандистского инструмента для привлечения внимания международного сообщества и его реакции на серьезные нарушения культурных прав. В наших статьях мы многократно касались темы уничтожения культурного наследия в современности, сопро-

вождающегося геноцидом. Все это указывает на то, что нынешняя безнаказанность диктует необходимость принятия новой международной конвенции, криминализирующей уничтожение культурных ценностей.

REFERENCES

1. **Ak'ch'am T'aner**, Hayeri b̄ni islamats'umě. Iṛut'yun, zhkhtum yev utsats'um, Yer., 2016 (**In Armenian**).
2. Genocid, «Bol'shaja sovetskaja enciklopedija», t. 6, M., 1971 (**In Russian**).
3. Haykakan harts' hanragitaran, Ye'r., 1996 (**In Armenian**).
4. **Hovhannisyan A.**, T'urk'ia. mshakut'ayin ts'eghaspanut'yun, Yer., 2014 (**In Armenian**).
5. **Parsamyan S.**, Haykakan mshakut'ayin arzhek'neri voch'nch'ats'man k'aghak'akanut'yunn u dra hetevank'nerě 1894-1896 t't'. hamidyan kotoratsneri ěnt'ats'k'um, «Ts'eghaspanagitakan handes», Ye'r., 2014, N 2 (1) (**In Armenian**).
6. **Parsamyan S.**, Haykakan mshakut'ayin arzhek'neri yurats'man yev voch'nch'ats'man Yeritt'urk'akan k'aghak'akanut'yuně (1915-1918 t't'.), «Ts'eghaspanagitakan handes», Yer., 2018, N 6 (1) (**In Armenian**).
7. **Parsamyan S.**, Mshakut'ayin ts'eghaspanut'yan iragortsman mekhanizmnerě 1909 t'. Adanayi u harakits' shrijanneri kotoratsneri ěnt'ack'um yev drants' hetevank'nerě, «Ts'eghaspanagitakan handes», Yer., 2013, N 1 (1) (**In Armenian**).
8. **Parsamyan S.**, Mshakut'ayin ts'eghaspanut'yuně mijazgayin iravunk'i hamatek'stum. tesakan himnadruyt'ner, «Ts'eghaspanagitakan handes», Ye'r., 2014, N 2 (2) (**In Armenian**).